ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հաստատվել է՝

Գիտական խորհրդի 25.03.2026 թվականի

թիվ 26-03-03-10 որոշմամբ

Գիտական խորհրդի նախագահ, Ռեկտոր ***Ա.Ա.Մուրադյան***

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Սովորողների ներքին կարգապահական» կանոնակարգով սահմանվում են Համալսարանի բարձրագույն կրթության, կլինիկական ռեզիդենտուրայի (օրդինատուրայի), միջին մասնագիտական և լրացուցիչ կրթության սովորողների (այսուհետ՝ Սովորողներ) Համալսարանում ներքին իրավահարաբերությունների կարգավորման և կազմակերպման կարգը, ինչպես նաև վարքագծային ու պատասխանատվության սահմանները և կանոնները:

2. Սույն կանոնակարգով կարգավորվում են նաև սովորողների իրավունքների, պարտականությունների հիմնական շրջանակը և կարգապահական պատասխանատվության կիրառման հիմնական ձևերը:

3. Սույն կանոնակարգն ունի դաստիարակչական և կանխարգելիչ խնդիրներ ու նպատակներ:

4. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը, Համալսարանի կանոնադրությունը, սույն կանոնակարգը և այլ իրավական ակտեր:

Հոդված 2. Համալսարանի իրավասությունների շրջանակը

1. Սույն կանոնակարգի իրավակարգավորման շրջանակներում Համալսարանի ղեկավարությունը, կազմակերպական ու ակադեմիական գործառույթներ իրականացնող աշխատողները պարտավոր են ապահովել և պայմաններ ստեղծել սույն կանոնակարգով սահմանված պայմանները և կանոնները պատշաճ իրականացնելու ուղղությամբ:

2. Սույն կանոնակարգի շրջանակներում Համալսարանի հիմնական նպատակներն են ապահովել՝

1) Համալսարանի ուսումնական գործընթացում սովորողների վարքագծի կանոնակարգված հարաբերությունները.

2) Սովորողների և աշխատողների փոխադարձ հարգանք և հանդուրժողականություն ապահովող միջավայր.

3) Սովորողների ու աշխատողների իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքը.

4) Սովորողների պատվի և արժանապատվության հարգման, խտրականության բացառման միջավայր.

5) Սովորողների կրթական ազատություններից օգտվելու պայմաններ՝ իրավական ակտերով սահմանված շրջանակներում:

Հոդված 3. Սովորողների իրավունքների շրջանակը

Սույն կանոնակարգի իրավակարգավորման շրջանակներում սովորողներն իրավունք ունեն՝

1) Սովորել իրենց իրավունքների ու ազատությունների հարգման և համաչափ պատասխանատվության միջոցների կիրառման պայմաններում.

2) Սովորելու կրթության համար բարենպաստ պայմաններում.

3) Անձնական մասնակցություն ունենալ կրթական միջավայրում հավասարության և ներառական մոտեցումների ձևավորմանը:

4) Ստանալու Համալսարանի կրթության կազմակերպիչների, այդ թվում ֆակուլտետի դեկանատի, ակադեմիական աշխատողների աջակցությունը՝ ուսումնական, կազմակերպական, վարքագծային, դաստիարակչական և այլ հարաբերություններում.

5) Ունենալու օբյեկտիվ և անաչառ վերաբերմունք՝ ուսումնառության ամբողջ ընթացքում, այդ թվում գիտելիքների գնահատման գործ-ընթացում.

6) Մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկվելը պաշտպանվելու՝ ինքնուրույն և (կամ) ներկայացուցչի միջոցով, ներկայացնելու գրավոր բացատրություն և բանավոր պարզաբանումներ,

7) Սովորողն ունի նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներ և ազատություններ:

Հոդված 4. Սովորողների ներքին կարգապահական ընդհանուր կանոններ

1. Ուսումնառության ընթացքում սովորողները պարտավոր են հետևել և կատարել սույն կանոնակարգի պահանջները՝ առաջնորդվելով բարեվարքության և իրավական փոխհարաբերությունների հաստատման սկզբունքներով:

2. Սովորողը պարտավոր է.

1) Պահպանել հասարակության կողմից ընդունված բարեկրթության ու բարեվարքության կանոնները:

2) Բարձր պահել Համալսարանի բարի համբավը:

3) Դասերի ժամանակ և Համալսարանի աշխատողների հետ շփումներում խոսել «Դուք» դիմելաձևով, գրական հայերենով:

4) Անձնական շփումներում և խոսակցության ժամանակ անհարկի չընդհատել, խոսել հանդարտ, առանց ձայն բարձրացնելու:

5) Բարձրացված հարցերին պատասխանել ճշմարիտ, հակիրճ և բովանդակային, բացառելով սուտը:

6) Դասերի ընթացքում կրել բժշկական համազգեստ, եթե այլ կարգ առանձին առարկաների մասով չի սահմանվում: Ռազմաբժշկական ֆակուլտետի սովորողները պետք է կրեն նաև զիվորական համազգեստ:

7) Դասերից չուշանալ, դասերին կամ դասամիջոցներին միջանցքներում չաղմկել, չխանգարել Համալսարանի աշխատողներին:

8) Համալսարանի իրավազոր աշխատողի հրավերի դեպքում՝ նվազագույն ժամկետում ներկայանալ Ուսումնամեթոդական վարչություն կամ ֆակուլտետի դեկանատ կամ այլ ստորաբաժանում:

9) Ֆակուլտետի դեկանի կամ Համալսարանի այլ իրավասու աշխատողի պահանջի դեպքում ներկայացնել գրավոր բացատրագիր:

10) Համալսարանից դուրս հարաբերություններում, այդ թվում սոցիալական ցանցերում հանդես գալիս ձեռնպահ մնալ Համալսարանի մասին վարկաբեկող, չճշտված, կեղծ տեղեկատվության տարածումից:

11) Առանց Համալսարանի աշխատակազմի ղեկավարի համաձայնության ելույթ չունենալ և (կամ) հարցազրույց չտալ Համալսարանի անունից:

12) Համալսարանին ներկայացնել հավաստի տեղեկատվություն և փաստաթղթեր, խուսափել զեղծարարությունից, խարդախությունից և տվյալների ու փաստերի կեղծումից:

3. Սովորողն ունի օրենսդրական ակտերով, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ:

4. **Սույն հոդվածով սահմանված պահանջներից որևէ մեկը խախտելու դեպքում Սովորողի նկատմամբ կարող է կիրառվել** «**Նկատողություն**» **կարգապահական տույժը**:

Հոդված 5. ***Իրավունքների հարգման մասին***

1. Մարդկանց հետ հարաբերություններում սովորողները պարտավոր են առաջնորդվել իրավունքների հարգման սկզբունքներով:

2. Սովորողը պարտավոր է.

1) Հարգել Համալսարանի աշխատողների, սովորողների, այլ անձանց իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանա-պատվությունը, խոսքի ազատության իրավունքը:

2) Ցուցաբերել հարգալից վերաբերմունք, հանդուժողականություն՝ Համալսարանի աշխատողների, սովորողների, բուժաշխատողների, պացիենտների և այլ անձանց հետ հարաբերություններում:

3) Բացառել՝ Համալսարանի աշխատողների, սովորողների, բուժաշխատողների և պացիենտների նկատմամբ խոսքի կամ գործողության միջոցով վիրավորող, ստորացնող, ահաբեկող, խտրական, ստիպողական արարքները, առավել ևս ֆիզիկական ուժի կիրառումը կամ այլ ոտնձգությունը:

3. **Սույն հոդվածով սահմանված պահանջներից որևէ մեկը խախտելու դեպքում Սովորողի նկատմամբ կարող է կիրառվել** «**Նկատողություն**» **կամ** «**Համալսարանից հեռացում**» **կարգապահական տույժը**:

Հոդված 6. ***Ուսումնական գործընթացում սովորողների պարտականությունները, ակադեմիական ազնվություն***

1. Ուսումնական գործընթացում, այդ թվում գիտելիքների ստուգման գործընթացում Սովորողը պարտավոր է՝

1) Ցուցաբերել ակադեմիական բավարար առաջադիմություն:

2) Կատարել ուսումնական պլաններով և ուսումնական գործընթացի ժամանակացույցով նախատեսված առաջադրանքները:

3) Դասերից չբացակայել:

4) Համալսարանի իրավական ակտերով և իր հետ կնքված «Կրթության մասին» պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վճարը:

5) Հետազոտական և այլ աշխատանքներ իրականացնելիս կատարել ճշգրիտ հղումներ սկզբնաղբյուրներին:

6) Բացառել այլ անձի կողմից կատարված ուսումնական, հետազոտական, գիտական աշխատանքների ներկայացումը՝ որպես իր կողմից կատարված (գրագողություն):

7) Պահպանել ազնվության սկզբունքը և ուսումնական, այդ թվում գիտելիքների ստուգման գործընթացում իր փոխարեն այլ սովորողի կամ այլ անձի ներկայանալուն ուղղված գործողություններ չկատարել:

8) Գիտելիքների ստուգման գործընթացներում չներկայանալ ուրիշ սովորողի փոխարեն:

9) Գիտելիքների ստուգման գործընթացում չօգտագործել ցանկացած տեխնիկական միջոց(ներ)՝ սույն կանոնակարգով սահմանված պայման-ներով:

10) Չներկայանալ որպես բուժաշխատող, այդ թվում արգելվում է առողջության, բժշկման մասին խորհուրդներ ու ցուցումներ տալ անձանց, Համալսարանի հետ համագործակցող կլինիկական բազայի պացիենտներին:

11) Չօգտագործել և (կամ) երրորդ անձանց չփոխանցել՝ ուսումնառության ընթացքում հայտնի դարձած Համալսարանի առևտրային ու ծառայողական գաղտնիք համարվող տվյալները, անձնական տվյալները, պացիենտի վերաբերյալ բժշկական գաղտնիք համարվող տեղեկությունները:

12) Ամենօրյա պարբերականությամբ ստուգել և հետևել Համալսարանի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի և «ԵՊԲՀ էլեկտրոնային համալսարանի» անձնական էջի տեղեկություններին և հաղորդագրություններին:

2. **Սույն հոդվածով սահմանված պահանջներից որևէ մեկը խախտելու դեպքում Սովորողի նկատմամբ կարող է կիրառվել «Նկատողություն» կամ «Համալսարանից հեռացում» կարգապահական տույժը**:

Հոդված 7. Սովորողների այլ վարքագծային կանոնները

1. Ուսումնառության ընթացքում Սովորողը պարտավոր է՝

1) Պահպանել հասարարական կարգը:

2) Բացառել Համալսարանում հասարակական, քաղաքական, կրոնական, ինչպես նաև կրթության և գիտության հետ անմիջական առնչություն չունեցող գործունեությունը և այդ ոլորտների կառույցների ստեղծումը՝ բացառությամբ ուսանողական, գիտական կառույցների:

3) Պատշաճ օգտագործել Համալսարանին պատկանող գույքը և փոխհատուցել Համալսարանին պատճառված գույքային վնասը:

4) Ձերծ մնալ չթույլատրված տարածքներ, ինչպես նաև ստորաբաժանումներ մուտք գործելուց:

5) Բացառել Համալսարանի տարածքում ծխելը, բացառությամբ դրա համար հատկացված հատուկ տարածքների:

6) Բացառել Համալսարանի մասնաշենքեր, այդ թվում հիվանդանոցներ և համագործակցող կլինիկական բազաներ ալկոհոլային խմիչքներ և (կամ) թմրամիջոց և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) միջոցներ ներսբերումը և (կամ) դրանք օգտագործած վիճակում ներկայանալը:

7) Բացառել Համալսարանում մոլի խաղերով զբաղվելը:

8) Բացառել հրազեն և (կամ) քիմիական և (կամ) պայթուցիկ նյութերի և (կամ) կտրող, ծակող գործիքների և (կամ) սարքերի ներսբերումը և (կամ) կիրառումը Համալսարանի բոլոր մասնաշենքերում, այդ թվում հիվանդանոցներում և համագործակցող կլինիկական բազաներում:

2. **Սույն հոդվածով սահմանված պահանջներից որևէ մեկը խախտելու դեպքում Սովորողի նկատմամբ կարող է կիրառվել «Նկատողություն» կամ «Համալսարանից հեռացում» կարգապահական տույժը**:

Հոդված 8. Սովորողների արտաքին տեսքին ներկայացվող պահանջներ

1. Սովորողը պարտավոր է Համալսարանում պահպանել հագուկապին և անձնական հիգիենային ներկայացվող սույն կանոնակարգով ներկայացվող հետևյալ պահանջները.

1) Սովորողը Համալսարան պետք է ներկայանա խնամված տեսքով և հագուկապով:

2) Սովորողը պետք է կրի համալսարանական միջավայրին էթիկապես հարիր զգեստ:

3) Սովորողի վարսերը պետք է լինեն խնամված և հարդարված, դասընթացները հիվանդանոցներում իրականացվելու դեպքերում՝ վարսերը պետք է հավաքված լինեն:

4) Սովորող տղաները գերադասելի է լինեն սափրված կամ պետք է խնամված ու ոչ երկար մորուք ունենան:

5) Սովորողների եղունգները պետք է լինեն մաքուր և կարճ:

6) Արգելվում է կրել սպորտային համազգեստ:

2. **Սույն հոդվածով սահմանված պահանջներից որևէ մեկը խախտելու դեպքում Սովորողի նկատմամբ կարող է կիրառվել** «**Նկատողություն**» **կարգապահական տույժը**:

Հոդված 9. Ուսումնական և գիտելիքների ստուգման գործընթացներում տեխնիկական միջոցների օգտագործման մասին

1. Ուսումնական գործընթացում՝

1) Սովորողները տեխնիկական միջոցներ, այդ թվում համակարգիչ, համացանց և այլ տեխնիկական հնարավորություններ կարող են օգտագործել Համալսարանի գրադարանում և հատուկ հատկացված լսարաններում:

2) Դասերի ընթացքում ուսումնական նյութերից, որոնողական համացանցային համակարգերից սովորողները կարող են օգտվել միայն դասախոսի թույլտվությամբ:

2. **Գիտելիքների ստուգման բոլոր գործընթացներում արգելվում է ցանկացած տեխնիկական միջոցի օգտագործումը** (էլեկտրոնային դասագրքային աղբյուր, արհեստական բանականություն, բջջային հեռախոս, արտաքին կապ ապահովող ցանկացած այլ կրիչ, սարք, ականջակալ և այլն), բացառության այն դեպքերի, երբ դա բխում է առարկայի կրթական վերջնարդյունքից՝ Համալսարանի կողմից հաստատված դեպքերում:

Գիտելիքների ստուգման գործընթացներում արտաքին կապ ապահովող տեխնիկական միջոցների օգտագործման արգելքն ապահովելու նպատակով Համալսարանը կարող է օգտագործել որոնողական սարքեր՝ քննասենյակի մուտքի մոտ և (կամ) քննասենյակում, սույն կանոնակարգով սահմանված կարգով:

3. **Համակարգչային ձևաչափով գիտելիքների ստուգման ընթացքում** արտաքին կապ ապահովող տեխնիկական միջոցների օգտագործման արգելքն ապահովելու նպատակով Համալսարանը կարող է կիրառել որոնողական սարքեր, հետևյալ կանոններով և հաջորդականությամբ.

1) Համակարգչային սենյակում սովորողի մոտ արտաքին կապ ապահովող տեխնիկական միջոցի առկայության մասին կասկածի դեպքում կասեցվում է սովորողի մասնակցությունը քննական գործընթացին:

2) Հատուկ տեսանկարահանվող սենյակում (տարածքում) որոնողական սարքի միջոցով ստուգվում է սովորողի մոտ արտաքին կապ ապահովող որևէ տեխնիկական միջոցի առկայությունը:

3) Ստուգման արդյունքում որոնողական սարքի ձայնային ազդանշանի դեպքում սովորողին առաջարկվում է ներկայացնել ձայնային ազդանշանի հնարավոր պատճառ հանդիսացող իրը կամ տեխնիկական միջոցը:

4) Սովորողի կողմից արտաքին կապ ապահովելու հետ կապ չունեցող իր ներկայացվելու դեպքում՝ սովորողը որոնողական սարքի միջոցով կրկին ստուգվում է և ձայնային ազդանշանի բացակայության դեպքում շարունակում է մասնակցել քննական գործընթացին և վերականգնվում է քննության համար նախատեսված ժամանակը:

5) Սովորողի կողմից արտաքին կապ ապահովող տեխնիկական միջոց ներկայացվելու դեպքում՝ սովորողի մասնակցությունը քննական գործընթացին դադարեցվում է և տվյալ քննության արդյունքը համարվում է բացասական, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն և Համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու մասին գրություն է ուղղարկվում Համալսարանի Էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակ[1], որը երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է սովորողի կողմից արտաքին կապ ապահովող տեխնիկական միջոցով գիտելիքների ստուգման կանոնները խախտելու փաստը:

[1] Կարգապահական հարցերի հանձնաժողով

6) Սովորողի կողմից որևէ իր կամ տեխնիկական միջոց ներկայացնելու պահանջը չկատարելու դեպքում՝ սովորողը կրկին ստուգվում է որոնողական այլ սարքի միջոցով և ստուգման արդյունքում ձայնային ազդանշանի կրկին առկայության դեպքում՝ ազդանշանը գնահատվում է որպես «**արտաքին կապ ապահովող սարքի առկայության փաստ**» և սովորողի մասնակցությունը քննական գործընթացին դադարեցվում է, տվյալ քննության արդյունքը համարվում է բացասական, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն և Համալսարանի ներքին կարգապահական կանոնները խախտելու մասին գրություն է ուղղարկվում Համալսարանի Էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակ, որը երեք աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է սովորողի կողմից արտաքին կապ ապահովող տեխնիկական միջոցով գիտելիքների ստուգման կանոնները խախտելու փաստը:

4. **Ամփոփիչ բանավոր ատեստավորման ընթացքում** տեխնիկական միջոցների օգտագործման արգելքն ապահովելու նպատակով Համալսարանը կարող է կիրառել որոնողական սարքեր, հետևյալ կանոններով և հաջորդականությամբ.

1) Մինչև ատեստավորման մեկնարկը՝ քննական սենյակի մուտքի մոտ որոնողական սարքերի միջոցով ստուգվում է սովորողի մոտ արտաքին կապ ապահովող տեխնիկական միջոցի առկայության փաստը:

2) Ստուգման արդյունքում սովորողի մոտ որևէ տեխնիկական միջոցի կամ իրի առկայության մասին ձայնային ազդանշանի դեպքում սովորողի մուտքը քննական սենյակ արգելվում է և սովորողին առաջարկվում է ձայնային ազդանշանի հանգամանքը վերացնել և կրկին ստուգվել:

3) Որոնողական այլ սարքի միջոցով կրկին ստուգվելու և ստուգման արդյունքում ձայնային ազդանշանի կրկին առկայության դեպքում՝ ազդանշանը գնահատվում է որպես «**արտաքին կապ ապահովող սարքի առկայության փաստ**» և սովորողի մասնակցությունը քննական գործընթացին դադարեցվում է՝ քննական տեղեկագրում նշելով «չթույլատրված», որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն:

Ամփոփիչ ատեստավորման հաջորդիվ գործընթացներին սովորողի մասնակցությունը չի արգելվում:

4) Սովորողի ստուգման արդյունքում ձայնային ազդանշանի բացակայության դեպքում՝ սովորողի մասնակցությունը քննական գործընթացին թույլատրվում է:

5. Համալսարանում գիտելիքների ստուգման սույն հոդվածով չնախատեսված այլ գործընթացներում որոնողական սարքերի միջոցով ստուգումներ կարող են իրականացվել ըստ անհրաժեշտության:

6. **Սույն հոդվածով նախատեսված՝ գիտելիքների ստուգման գործընթացներում արտաքին կապ ապահովող տեխնիկական միջոցների օգտագործման արգելքի պահանջները խախտելու դեպքում սովորողի նկատմամբ կիրառվում է «Համալսարանից հեռացում» կարգապահական տույժը**:

Հոդված 10. Գաղտնի տեղեկությունների պահպանման մասին

1. Սովորողը պարտավոր է գաղտնի պահել սովորելու ընթացքում իրեն հայտնի դարձած Համալսարանի առևտրային ու ծառայողական գաղտնիք համարվող տվյալները, անձնական տվյալները, պացիենտների բժշկական գաղտնիքի մասին տեղեկությունները:

2. Սույն հոդվածով նախատեսված ծառայողական, առևտրային գաղտնիք, անձնական տվյալները և պացիենտների բժշկական գաղտնիքի մասին տեղեկությունները կարող են երրորդ անձանց փոխանցվել Համալսարանի ռեկտորի համաձայնությամբ կամ օրենքով սահմանված այլ կարգով:

3. Սովորողը պետք է գիտակցի, որ գաղտնիության կանոնների պահպանման մասին ՀՀ օրենսդրության և սույն կանոնակարգի պահանջների խախտման դեպքում կարող է ենթարկվել պատասխանատվության՝ ինչպես սույն կանոնակարգով սահմանված պատասխանատվության տեսակով, այնպես էլ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության այլ տեսակներով:

4. Սովորողը պետք է գիտակցի, որ գաղտնիության կանոնների պահպանման մասին ՀՀ օրենսդրության և սույն համաձայնագրի պահանջների խախտման դեպքում կարող է ենթարկվել պատասխանատվության նաև Համալսարանում ուսումնառության ավարտից հետո:

5. **Սույն հոդվածով սահմանված պահանջները խախտելու դեպքում Սովորողի նկատմամբ կարող է կիրառվել «Նկատողություն» կարգապահական տույժը**:

Հոդված 11. Սովորողի նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառումը

1. Սույն կանոնակարգով սահմանված սովորողների իրավունքները և պարտականությունները սպառիչ չեն և այլ իրավական ակտերով սահմանվում են նաև այլ իրավունքներ և պարտականություններ:

2. Սովորողներին սույն կանոնակարգով սահմանված կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքեր են հանդիսանում՝ Համալսարանի կանոնադրությունը, սույն կանոնակարգը, ներքին կանոններ սահմանող Համալսարանի իրավական ակտերը և այլ իրավական ակտեր:

3. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը և դրա հետևանքները, սովորողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները:

4. Սույն կանոնակարգի և իրավական ակտերի պահանջները խախտելու յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

5. Համալսարանի ներքին կարգապահական կանոնների խախտում է համարվում սովորողի մեղքով՝ սովորողի համար սահմանված պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, սահմանված վարքագծի կանոնները որևէ այլ կերպ խախտելը:

6. Մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելը սովորողը կարող է ներկայացնի գրավոր բացատրագիր և բանավոր պարզաբանում(ներ):

7. Սահմանվում են սովորողների կարգապահական պատասխանատվության հետևյալ տեսակները.

1) «***Նկատողություն***»,

2) «***Համալսարանից հեռացում***»:

8. Սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով սահմանված Սովորողին վերապահված պարտականություններն առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու դեպքում, այն է՝ ամբողջ ուսումնառության ընթացքում երկու կարգապահական տույժ՝ «Նկատողություն» ունենալու և կարգապահական կանոնների ևս մեկ խախտման դեպքում Սովորողը կարող է Համալսարանի Էթիկայի և իրավունքի պաշտպանության հանձնաժողովի որոշման հիման վրա և Համալսարանի ռեկտորի հրամանով հեռացվել Համալսարանից:

9. Սովորողի նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննարկվում են Համալսարանի Էթիկայի և

իրավունքի պաշտպանության հանձնաժողովում, որը պետք է ընդունի համապատասխան որոշում:

10. Սովորողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին հարցը ներկայացվում է սույն կանոնակարգով սահմանված կարգով կամ համապատասխան ֆակուլտետի դեկանը հարցը ներկայացնում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին և վերջինս՝ ներկայացնում է Համալսարանի Էթիկայի և իրավունքի պաշտպանության հանձնաժողովին:

11. Սովորողի կարգապահական պատասխանատվության մասին Համալսարանի Էթիկայի և իրավունքի պաշտպանության հանձնաժողովի որոշման հիման վրա Համալսարանի ռեկտորը կարող է արձակել հրաման:

12. Սույն կանոնակարգով նախատեսված կարգապահական տույժերը կարող են կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս:

* * *